Բրդաձորից ոչ հեռու, նոյն հովտի մէջ, փոքր ինչ դէպի հիւսիս, Խոժոռնի աւանն է, որ ըստ Վարդանի Զաքարեանց նախահայրենիքն էր. նրանք այդտեղ հաստատուած պիտի լինին ԺԱ. դարում. մենք ունինք այդտեղ նրանցից ԺԳ. դարի արձանագրական յիշատակներ, ինչպէս Զաքարիա մեծի որդի Շահնշահինը անտառում, որ բանասիրութեան դեռ եւս անյայտ է: Բայց Զաքարեանների տիրապետութիւնից էլ շատ առաջ՝ այդտեղ եղել է սեղծագործական եւ մշակոյթային կեանք: Փոքրիկ մի նաւանի բաղիլիկ եկեղեցի գտնւում է Խոժոռնի գիւղում՝ բլրի վերայ, որ յիշեցինք առաջ, ուր Վրացի իշխան Մելիքովների բնակարանն էր, յետոյ գնուած մեծահարուստ Արամեանի կողմից, իսկ այժմ պետականացած: Այդ եկեղեցու մօտ է այն դերեզմանական կոթողը, որ յիշեցինք առաջ:

Բայց եղել է մի շատ աւելի փառահեղ տաճար, աւերակների ազնիւ մնացորդներից դատելով, որի տեղը շինուած է ԺԱ. դարում այստեղ ցուցադրուած չէնքը (Պատկ. 49). սորա պատերի մէջ գործադրուած են շատ քանդակներ, հնից մնացած, ներսն էլ այժմ հաւաքուած են քանդակների բեկորներ, որոնցից մէկը խորաքանդակ, պսակի մէջ առնուած մի գեղեցիկ, հաւասարակող խաչ է, որոնց նման խորաքանդակներով, այլ եւս է. դարից սկսած գործածական չեն հայ քանդակագործութեան մէջ: Եկեղեցու արձանագրութիւններն ու առանձնայատուկ ուսումնասիրութիւնը Զաքարեանց շրջանի յիշատակներով, թողնում ենք այլ առթիւ, բայց ներկայիս տալիս ենք հին եկեղեցու քանդակներից մի քանի բեկորներ, որոնք կասկածի տեղիք չեն թողնում, թէ նա մէկն է եղել Օձունի շրջանի եւ նորա դերեզմանական յուշարձանի շինութեան ժամանակից: Ահա ձեզ ալիքաձեւ արմաւենիկի քանդակը, (Պատկ. 50), որ տեսանք Բրդաձորի կոթողի, եւ նոյնն ունինք Ե. դարի Տիկորի արեւմտեան դրան ճակատաքարի վերայ: Երկրորդ քանդակը (Պատկ. 51) տեսանք նոյն-

Պատկ. 54

պէս Բրդաձորի յուշարձանի պատուանդանի վերայ. նման մոտիւը Strz. ծագումով սասրական է համարում Ե.–Զ. դարերի գործ:* Զորրորդը (Պատկեր 52) խաչի քանդակը, ճակատի սասանեան հասկաձեւ զարդի հետ, ամենասերտ առնչութիւն ունին քանդակման եղանակի եւ մոտիւների կողմից Բրդաձորի, Օձունի եւ Կող-

*Die Koptische Kunst պատկ. 189: 8792: Համեմատել եւ Crum. Die Grabstelle 8633, pl. X.